



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ»  
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

« 29 » հոկտեմբերի 2021թ. 155-Ն

ք. Երևան

ՀՐԱՄԱՆ

Հիմք ընդունելով ՀՀ էկոնոմիկայի նախարարի № 377-Ա առ 14.06.2021թ. «Արցախի Հանրապետությունում «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերության մասնաճյուղ ստեղծելու, մասնաճյուղի կանոնադրությունը հաստատելու մասին» հրամանը և մասնաճյուղում աշխատանքները կանոնակարգելու նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ընկերության «Արցախ» մասնաճյուղում սահմանել «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերության կողմից չափման միջոցների տեսակի հաստատման գործընթացի ուղեցույցը՝ համաձայն Հավելված 1-ի, չափման միջոցների տեսակի հաստատման համար վճարման ենթակա աշխատանքների ցանկը և դրանց վճարման գները՝ համաձայն Հավելված 2-ի:
2. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
3. Հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Տնօրեն  
Ժամանակավոր պաշտոնակատար

ԱԼԲԵՐՏ ԲԱԲԱՅԱՆ